ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Վահան Տերյանի նամականին

Ուսուցիչ՝ Գիսանե Հակոբյան

Խումբ՝ Հայոց լեզու, գրականություն

Խմբի ղեկավար՝ Լիլիթ Մարկոսյան

Եղեգնաձոր 2022

Բովանդակություն

1. Ներածություն……...3
2. Վահան Տերյանի նամականին ……..4
3. Եզրակացություն ……16
4. Օգտագործված գրականության ցանկ ……17

Ներածություն

Վ.Տերյանը բացառիկ դեմք է 20-րդ դարի հայ պոեզիայի պատմության մեջ: Նա հեղաշրջեց գեղարվեստական մտածողությունը՝ բերելով նոր աշխարհայացք, պատկերային նոր համակարգ, նոր գրական լեզու, չափածո խոսքի ներդաշնակության միանգամայն նոր արվեստ:Նա անսահման նրբություն և երաժշտականություն հաղորդեց բանաստեղծությանը և միանգամայն նոր կյանք պարգևեց գրականությանը: Նա մեր պոեզիայի ամենից ջերմորեն սիրված ու նվիրական անուններից է, սակայն տերյանագիտության ակներև նվաճումների կողքին բարձիթողի վիճակում է <<Տերյանի ստեղծագործական կյանքը>>, <<Տերյանի նամակագրությունը>>:

Վ. Տերյանը նոր ժամանակների առաջին բանաստեղծներից մեկն է,որը բերեց նոր քնարական հերոս, նոր լեզու, նոր հոգեվիճակների և գեղագիտական մտածողության միանգամյան նոր համակարգ:Նա ասես գրականություն եկավ մեկ ուրիշ աշխարհից և իրենով, ինչպես Հ.Թումանյանն է ասել, հաստատեց մեր նոր քնարերգության ետթումանյանական փուլը:

Այս հետազոտական աշխատանքը նվիրված է՝ Տերյանի նամակների ուսումնասիրությանը: Կանդրադառնանք Տերյանի անձնական նամակներին, այն նամակներին որոնք ուղղված են ընկերներին:Վ. Տերյանը այն գրողներից է, որոնք գրական մեծարժեք ժառանգություն թողնելով հանդերձ, շատ քիչ բան են գրել իրենց անձնական կյանքի մասին: Բարեբախտաբար ինքնակենսագրականի բացը զգալի չափով լրացնում են բանաստեղծի գրած նամակները, որոնք նա ուղղել է իր մերձավորներին մոտ երկու տասնյակ տարիների ընթացքում:

Վահան Տերյանի նամականին

Նամակները, բառիս ճշգրիտ նշանակությամբ խոսակցություններ ու զրույցներ են բացակա մարդկանց հետ:Դրանք փոխարինում են բանավոր խոսակցությանը, բայց իրենց մեջ ամփոփում են սոսկ մեկ անձի ասածները: Բանավոր խոսակցությունն ունի անկաշկանդ և անպաճույճ, հանպատրաստից գրածների հատկությունները, և նույն այս որակները կազմում են ամեն մի լավ նամակի անհրաժեշտ պատկանելությունը: Դրանց մեջ սակայն, կա նաև տարբերություն. նամակի ներգործությունն ավելի հաստատուն է, մինչդեռ խոսակցությունը առավել արտահայտչություն է ստանում այն ձայնից, որով արտասանվում է, և դրա հետ միաժամանակ արվող շարժուձևերից: Սրանից պարզ է,որ նամակում դյուրըմբռնելի պիտի լինի բառերի գործածությունն ու դրանց տեղադրությունը, և պետք է ջանալ մտքերն արտահայտել լրիվ, հստակ և տեղին:Նամակ շարադրելիս պետք է հարազատ մնալ հետևյալ կանոնին.գրել այնպես, ինչպես դու պետք է խոսեիր այս դեպքում, սակայն՝ խոսիր ճշգրիտ,կապակցված ու հաճելի:

Նամակները գրող մարդկանց և այդ ժամանակի բոպեական, բայց հրատապ ցուցանիշներն են: Իհարկե, անհամեմատ բարձր է գրողի, համապատասխանորեն և գրական գործչի նամակների նշանակությունը:Բացի այն,որ դրանք հարկ է դիտել որպես գրողի գրական ժառանգության մի մասը, նամակները լավագույն և ամենահուսալի աղբյուրներն են հանդիսանում նրա անձնավորությունն ու նրա կյանքի ամբողջ աշխատանքը հասկանալու համար:Նամակները մեր առջև բաց են անում գրողի էության կեսը, որը թաքուն է բոլորից, մերկացնելով նրա հոգու և մտքի ամենանվիրական կողմերը: Իր գեղարվեստական երկերում գրողը դիմում է <<ընթերցողի>> անդեմ կերպարին, նրա առջև մի հսկայական լսարան է, որտեղ նա չի զանազանում տարբեր մարդկանց, նա խոսում է <<բոլորի>> համար, ովքեր ականջներ ունեն լսելու: Մինչդեռ իր մասնավոր զրույցի ժամանակ նա խոսակցում է սոսկ իր մեկ, տվյալ թղթակցի հետ, միայն նրան է վստակում իր, հաճախ ամենամտերիմ խոհերն ու գաղափարները, կոչ է անում, որ նա դուրս գա մասնավոր զրույցի և դատողությունների փոխանակության այս կերպ լրացնելով այն, ինչ նա արտահայտել է բոլորի համար:

Մասնավոր նամակների ընդհանուր տոնը ավելի լավ է, քան որևէ ուրիշ մի նյութ: Դա մեզ հնարավորություն է տալիս որոշակի և հստակ պատկերացում ունենալ

մի գրողի մասին, որին մենք անձամբ չգիտենք, զգալ նրա անձնավորության բուն էությունը, հասկանալ նրա հոգեբանական, ներքին աշխարհը, նրա աշխարհայեցողությունը և հոգեկան տրամադրությունը, նրա հետ միասին ասես մտնել անմիջական, մտերիմ շփման մեջ:

Նամակների ոճով, շարադրանքի եղանակով և իր տոնով այդ գրողը կարծես թե ձեռափի վրա է ամբողջությամբ: Իզուր չէ ասված, որ <<մարդուն կարելի է ճանաչել իր ոճով>>:

Նամակներում շարադրված տողերը վերաբերվում են գրողի ներքին աշխարհին, մինչ նրա հոգու <<սրբության սրբոցը>>, և այդ մտքով նամակների նշանակությունն անժխտելի է:Սակայն նույնքան մեծ է դա, այդ նշանակությունը գրողի կենսագրության համար ևս, նրա կյանքի արտաքին փաստերի , նրա աշխատանքի պայմանների և իրադրության, նրա ստեղծագործական եղանակների, նրա երկերի արտաքին պատմության, նրա բարեկամների մերձավորների ,ընտանիքի անդամների բախտի…Դա մի հայելի է, որի մեջ անկեղծ (երբեմն էլ մինչև իսկ ոչ անկեղծ) մարդը, իսկ գրողը՝ առանձնապես, կարտացոլվի պարզ, պայծառ ու ճշգրիտ:<<Հորինող-հեղինակը տպագրված երկում համարյա թե դերասան է բեմի վրա:Երկի մեջ այնուամենայնիվ ակամա կերպով երևում է հորինող հեղինակը: Մինչդեռ նամակներում մարդը ավելի առկա է>>- անցյալում ասել է Պ. Վյազեմսկին:

Նյութը հետաքրքիր է ոչ միայն նշանավոր բանաստեղծի ներքնաշխարհը բացահայտելու մտքով, այլև շահեկան տեղեկություններ է պարունակում նրա ապրած ժամանակի գրական, հասարակական, անշուշտ նաև քաղաքական կյանքի վերաբերյալ:

Նամականին պարունակում է Վ.Տերյանի գրությունները ուղղված հետևյալ անձանց և հիմնասրկություններին՝ Հ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին, Մ.Գորկուն, Ալ. Ծատուրյանին,Ստ. Զորյանին, Կ. Կոստանյանին, Ց. Խանզադյանին, Վալերիյ և Իոաննա Բրյուսովներին, Վառվառե Հարությունյան –Խանզադյանին, Ռ. Մելիքյանին, Նվարդ Թումանյանին, Ա. Տիգրանյանին, Գրետա(Մարգարիտ) Շահխաթունուն, Ա.Ահարոնյանին, Համբ. Առաքելյանին, Օնիկ Օհանջանյանին, Սոֆյա Օտարյանին, Անթառամ և Մարթա Միսկարյաններին, Կարեն Միքայելյանին, << Հուշարար>>-ի խմբագիր Արամ Վրույրին, Արիստակես Զարգարյանին, (Կովկ. հայոց հրատ. ընկ.) , Հար. Դուրգարյանին, Կաթողիկոսական դիվանին, <<Մշակ>>-ի խմբագրությանը և այլն:

Տերյանի նամակներն ուսումնասիրելիս շատ ընդհանրություններ ենք նկատում հեղինակի անձնական զգացումների և քնարական հերոսի հոգեկան ապրումների միջև: «Նրա «լիրիկական հերոսի» և բանաստեղծի անձի միջև չկա որևէ տարաձություն: Նա խոսում է իր անունից, արտահայտում իր սեփական զգացմունքներն ու հույզերը» : Այս իմաստով հետաքրքիր է հենց իր՝ Տերյանի

դիտարկումը նամակի մասին. «Բանն այն է, որ նամակ գրելը ես համարում եմ մի զրույց, իսկ ընկերական և մտերմական զրույցի ժամանակ խոսքերը չես ընտրում, չես աշխատում խոսել տրամաբանորեն ու «խելոք», այլ զրուցում ես անբռնազբոսիկ, ազատ առանց վախենալու և քաշվելու: Ահա թե ինչու ես ասում եմ, որ նամակը պետք է միայն այն մարդը կարդա, ում գրված է այն...» :

Տերյանն այնքան ազատ է իր շարադրանքում, որ թեև իր խոսքը համարում է խառն ու շփոթ, բազմագույն, բայց, միևնույն է, ուղարկում է այդ նամակները: Կանանց ուղղված նամակների շարքում առանձնակի ուշադրություն են գրավում Նվարդ Թումանյանին հասցեագրված նամակները: Թեև վերջինիս հետ նամակագրությունը կարճ է տևել, բայց այնուամենայնիվ այդ նամակներն իրենց բովանդակությամբ ամենահարուստն են թե՛ գեղագիտական ամենատարբեր խնդիրների վերաբերյալ մեկնաբանություններով, թե՛ այլ հարցերի քննարկումներով:

Նվարդին ուղղված մի նամակում Տերյանը գրում է. «Պաշտոնական կամ կիսապաշտոնական նամակագրությունից գրեթե զզվում եմ: Դրա համար ես կուզեի նամակագրության ժամանակ ինձ միանգամայն ազատ զգալ և անպատասխանատու, ինչպես ինքս իմ առջև» : Այս կերպ նա ընդհանրապես պարզում է նամակի բովանդակության վերաբերյալ իր նախընտրությունը: Տերյանի նամակները միշտ չէ, որ ունեն բովանդակային միակերպություն և վերաբերում են որևէ կոնկրետ երևույթի կամ հարցի: Ավելի հաճախ նրանցում համատեղվում, իրար հաջորդում են տարբեր հարցերի վերաբերյալ դիտարկումներ: Ստացվում է այնպես, որ անձնական ապրումների, տրամադրությունների բացահայտումները հաճախ ընդմիջվում են ազգային-հասարակական հարցերի քննությամբ: Օրինակ՝ Նվարդին ուղղված մեկ այլ նամակում ցավով գրում է. «Վերջ ի վերջո ես սկսում եմ գալ այն եզրակացության, որ մեր հայրենիքի ցավը մեզ այնպես է մաշում, ջլատում, կեղեքում, որ մենք դառնում ենք անընդունակ ուրիշ բան հասկանալու կամ անելու: Դա մի հիվանդագին սեր է, դա մի անհաղթելի մոլություն է - դրա պրիզմայով է բացվում մեր առջև աշխարհը - այդ չափով ենք մոտենում մենք ամեն ինչի և գուցե դրա համար անզոր ենք դառնում ու մեռնում ենք վաղ» : Ալ. Ծատուրյանին ուղղված նամակներից մեկում, խոսելով բանաստեղծի և քնարական հերոսի մասին, Տերյանն ինքնախոստովանության պես գրում է. «Մենք գիտենք տատասկոտ ու փշոտ հայ բանաստեղծի ճանապարհը: Եթե ուրիշ ազգերի մեջ բանաստեղծ լինելու համար հարկավոր է միայն աստվածային կայծ ունենալ, մեր իրականության մեջ բանաստեղծը պետք է նաև հերոս լինի» : Այս ընդգծումը, անշուշտ, կարևոր է. չէ՞ որ բանաստեղծությունը գրողի հոգու և երազների արձագանքն է, իսկ նամակների ուշադիր քննությունը նպաստում է հեղինակի կերպարի ամբողջացմանը: Նվարդ Թումանյանին ուղղված գրեթե յուրաքանչյուր նամակում Տերյանը խոսում է իր հոգեկան վիճակի, գործերի, թարգմանությունների, բանաստեղծական ժողովածուների մասին, նաև այն մասին, թե դրանք ստեղծագործական որ փուլում են գտնվում:

Նվարդին ուղղված նամակներում պոետը խոսում է ոչ միայն իր գործերի, այլև «Մշակ»-ում լույս տեսնող հոդվածների մասին՝ անդրադառնալով ուրիշ գրողների ստեղծագործությունների: 1915 թվականի սեպտեմբերին Նվարդին հասցեագրված մի նամակում Տերյանը բնորոշում է արևելահայ արձակը. «Մեր պրոզան սարսափելի կերպով պրիմիտիվ է, երբեմն մարդ շշմած է մնում, թե ինչպես են այնքան միամիտ և պարզամիտ մեր գրողները: Բոլորը գրված են կիսագրագետ մարդկանց համար...» : Նվարդի նկատմամբ նուրբ զգացողություններն ու հուշերն ամեն անգամ նոր կյանք էին առնում, ու ծնվում էին նորանոր տողեր՝ բխած հեղինակի կարոտած սրտից. «Ես մի քանի տրիոլետ էի գրել Ձեզ համար, իմ սիրելի և լավ Նվարդ, բայց ուղղելու կարիք կա, ուստի չղրկեցի: Ուզում էի, որ «տրիոլետների մանյակ» լինի դա, բայց ամեն անգամ երբ նստում էի Ձեզ գրելու, միտս էին ընկնում այդ կիսատ մնացած տրիոլետներս և գրելու տրամադրությունս փախչում էր» .

Սրտիս հուշերը բարի են դեռ,

Եվ քո անվամբ է, անուշ Նվարդ,

Որ մայիսին այս դառն ու անվարդ

Սրտիս հուշերը բարի են դեռ:

Թեև իջնում է հոգուս վրա ստվեր

Եվ չեմ սպասում գալիքից վարդ՝

Սրտիս հուշերը բարի են դեռ

Քո քնքուշ անվամբ, անուշ Նվարդ:

Նվարդ Թումանյան

1920 թ. ապրիլին ծնվեց Տերյանի առաջնեկը, ով կրում էր պոետի մտերիմներից Նվարդի անունը: Հետագայում Նվարդ Թումանյանն իր հուշերում գրում է. «Նրա հոգին նուրբ էր ու քնքուշ, իր Գանձայի ծաղիկների նման՝ նրբին ու զգայուն: Սիրտը՝ ջերմ ու հուր, իր երկրի սարերի նման՝ կրակ ու հրաբուխ ու էդ սարերի նման էլ «լայն ու բաց», բայց միշտ մի թախծոտ տխրությամբ համակված, ինչպես իր հայրենի սարերը մշուշապատ» :

«...Տխուր է: Արդյոք երազա՞նքն է անիրականալիի մասին, թե՞ կարոտը անդառնալի-հեռավորի մասին, չգիտեմ: Ինչ-որ տարօրինակ զգացողություն է: Կարծես թե նամակը հին, վաղուց ծանոթ, մի ժամանակ մոտիկ եւ անակնկալ հեռացած մեկից է: Կարծես հարազատ եւ տարորեն հեռու, գուցե առհավետ, նույնիսկ ամենից հավանական է, առհավետ հեռու մեկից: Մի՞թե մենք կհանդիպենք: Մի՞թե կմտերմանանք երբեէ:

«Կուզենայի ավելի մոտիկ...» «Այդպես դասավորվեցին հանգամանքները»:

Ես էլ էի ուզում, հիշո՞ւմ եք:

Ինձ էլ խանգարեցին հանգամանքները: Բայց չէ որ մեզանից յուրաքանչյուրը կարող էր ասել՝ «ուզո՛ւմ եմ»: Եվ մոտենալ: Մի՞թե սարսափելի է մարդուն մոտենալը եւ մոտիկից նայելը: Երբեմն՝ այո: Բայց չէ՞ որ ամեն մեկը չարժե դրան: Գուցե ես էլ չարժեմ: Իսկ Դո՞ւք: Չգիտեմ: Բայց ես կուզենայի ավելի մոտիկ լինել, ինչպես եւ դուք, եւ համենայն դեպս մենք չմոտեցանք: Իսկ գուցե հենց դո՞ւք եք նա, որը չկա այս աշխարհում: Լավ է նրանց համար, ովքեր սիրում են և սիրված են: Նրանց համար հանգամանքներ չկան:

Եթե ես սիրեի՛: ... Մի տեսակ քարացել է հոգիս: Սառել է:

Անկամ ու հոգնած:

Գարունն այստեղ աշնան պես է:

Անձրեւ ու անձրեւ:

Տխրություն:

Մենակություն: Մշտապես:

Մենք բոլորս այդպես ենք: Տա՛ աստված, որ ուժգին սիրեք, ում որ սիրում եք: Սիրուց լավ բան չկա:

Իսկ ո՞վ կձայնի մեզ՝, մեռածներիս՝ «ելեք»: Ո՞վ կասի մեզ, տրտումներիս ու միայնակներիս՝ հավատով ու տիրական՝ «սիրեցե՛ք եւ դուք կհաղթեք մահվան»:

Անձրեւ է: Ցեխ: Գիշեր: Միայնություն: «Հեռվություն»: Ի՛նչ սարսափելի հեռվություն: Մարդ կարողանար սպանել այս միայնությունը: Տա՛ աստված, որ ուժգին սիրեք... Հանդիպում ես, ծանոթանում, բաժանվում: Հավիտենական շրջապտույտ: Եվ

հոգումդ վերստին դատարկություն է ու միայնություն: Եվ թախիծ: Հոգնածություն, մահացու հոգնածություն: Ինձ թվում է, թե ես մեռնում եմ: Ուզում եմ, որ երբ կմեռնեմ, և շուրջս մահվան լռությունը կտիրի, գերեզմանիս վրա հանկարծ, բայց աննկատելի, երաժշտություն հնչի, որ ճերմակ շորերով մի աղջիկ բերկրալից խաղաղ տրտմությամբ լի, մի եղանակ նվագի անիրականալիի, հեռավորի, առհավետ հեռավորի մասին: Որ շուրջս ծաղկեն փաղքուշ, պայծառ անմոռուկներ, ինչպես լուսավոր տխրության և մեղմ ուրախության մեղեդի:

Ախ, նորից այս տաղտկալին, աշնանայինը, հնազանդն ու մորմոքունը, սիրտ ճմլողը: Հավերժորե՛ն, հավերժորե՛ն:

Մարդ ազատվեր սրանից, այս անբացատրելի, այս տարօրինակ տխրությունից: Այս սարսափելի հոգնածությունից: Այս տաղտուկից ...»

Տառապագին մտածումների ու հոգեվիճակների մակընթացությունից ուղեկորույս, բայց և ներքին գոհացումի անորոշ ափը ցավագնորեն որոնող բանաստեղծը 1909թ. Գրում էր.

Ես մոլորվել եմ այս մութ աշխարհում,

Եվ ինձ խավարից ոչ ոք չի կանչում...

Որտեղ որոնեմ երջանկություն սուտ

Եվ ինչպես գտնեմ վերադարձի լաց ...

Հեղափոխությունը դարձավ աշխարհի հետ գժտված ու մենության մեջ ինքն իր հետ չհաշտվող մարդու վերադարձի եզրը դեպի կյանք : Հեղափոխությունը փրկություն էր այն անհնարին տառապանքից, երբ խամրում են կյանքի բոլոր գույներն ու խորհուրդները , և անարձագանք տարածության մեջ մարդը չի ընկալում անգամ սեփական հոգու լացը.

Ինքս իմ սրտին հարազատ չէի-

Ու ծաղր էր թվում հեկեկանքս չոր...

Ես լալիս էի,

Բայց օտարի պես էի ունկնդրում

Ինքս իմ հոգուն, ինքս իմ լացին...

Մարթա Միսկարյանին գրված նամակում Տերյանը պատմում է մարդկանց հարաբերությունների մասին: Նա ասում է, որ մարդիկ ծանոթանում են, բայց հետո առանձնանում: Նա դրանից տխրում է, և ասում է, որ կարծես իր սիրտը դատարկ ու մեռած լինի:

Վ. Տերյան, Ա. Միսկարյան

Վահան Տերյանի կյանքում թերևս ճակատագրական է եղել Անթառամ Միսկարյանի հետ հանդիպումը: Առաջին հայացքից վերջինս լավ տպավորություն է թողել բանաստեղծի վրա, տպավորություն, որը հետագայում վերաճել է սիրո: Իր սիրելի Անետային ուղղված նամակներից մեկում Տերյանը գրում է. «...Առաջին տպավորությունն ինձ համար ունի եթե ոչ վճռական, ապա, համենայն դեպս, հսկայական նշանակություն: Չեմ կարող ձեզ հետ համաձայնել, որ մեծ մասամբ պատահական հանդիպումներն ու ծանոթություններն են «հաճելի լինում»: Անթառամի հետ հաճելի հանդիպումն ու ծանոթությունը լավ բարեկամության հիմք են դառնում՝ սկզբնավորելով նրանց երկարատև, հետզհետե մտերմացող նամակագրությունը (1908 թ. հոկտեմբերից 1916 թ. Հուլիս : Հաճախ Անթառամին ուղղված նամակներից բառացի տողեր կարելի է տեսնել գրողի բանաստեղծություններում: Սա նշանակում է, որ Անթառամը Տերյանի համար սրտակից ընկեր է եղել, ում հետ զրուցելիս պոետն անկեղծացել է իր տրտմության, թախծի, թաքուն երազների, անձնական ապրումների մասին: «Ինչ-որ անտարբեր վիճակ է: Առանձնապես ոչ մի բան չեմ ուզում: Կամազրկություն է: Էհ, Անտյա, ճշմարիտ, ինքս էլ չգիտեմ, այս ինչ է կատարվում ինձ հետ: Միայն մի բան եմ ուզում՝ պառկել, պառկել անվերջ, անվերջ պառկել ու նայել առաստաղին: Աննպատակ պառկել: Աննպատակ պառկել: Մոռանալ ամեն ինչ, ամեն ինչ մոռանալ և ոչինչ ու ոչ ոքի մասին չմտածել: Իմ մասին էլ չմտածել՝ հանգստանա՛լ» . Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ, Ամենին մոռանալ. Չըսիրել, չխորհել, չափսոսալ և Հեռանա՛լ ... 1909 թ. Անթառամին հասցեագրված մեկ այլ նամակում կարդում ենք . «Մենության անապատից վերադառնալ մարդկանց մեջ նորոգված ու լուսավոր, սերը սըրտում և կյանքի, աշխատանքի ծարավով: Ես այս ամենը գրում եմ իմ մասին, բայց ինձ թվում է, որ դա մասամբ եթե ոչ ամբողջովին, վերաբերում է և ձեզ, սիրելի Անտյա» : Նրբազգաց քնարերգուի այս հոգեվիճակն ու տրամադրությունը նույնատիպ դրսևորվել են 1911 թ. գրված «Մենության խավար զնդանից կրկին...» բանաստեղծության մեջ. Մենության խավար զնդանից կրկին Ես վերադարձա հզոր ու հպարտ, Եվ ինձ ողջունեց աղմուկը զվարթ, Ու նոր խնդությամբ այրեց իմ հոգին... Այն, որ Անթառամի հետ նամակագրությունն առանձնահատուկ էր գրողի համար, երևում է նաև նրա՝ Անթառամին ուղղված մի նամակից ևս. «Ձեր նամակները ես միշտ կարդում եմ հսկայական բավականությամբ և դրանք զատում եմ իմ ստացած բազմաթիվ նամակներից: Դուք գրում եք միայնության, տրտմության, շրջապատի չհասկացողության մասին: Հավատացեք, Անտյա, ես հասկանում եմ ձեզ, շատ լավ եմ

հասկանում և ամբողջ սրտով կուզենայի ձեր բարեկամը լինել» : Սուսաննա Պախալովայի հետ ամուսնանալուց հետո Տերյանը շարունակեց Անթառամի հետ նամակագրությունը: Այդ հանգամանքը թերևս փաստում է Անթառամին սիրահարված լինելու իրողության մասին:

Ճակատագիրը բանաստեղծի տաղանդի հարցում շռայլ էր գտնվել, սակայն անձնական կյանքում նա դժբախտ էր: Սուսաննայի և Տերյանի համատեղ կյանքը չստացվեց: Թեև Անթառամն էլ էր ամուսնացել, բայց Տերյանը շարունակում էր վերջինիս հետ նամակագրությունը. նրանք դեռ հույսեր ունեին: 1909 թ. Անթառամին հասցեագրված մի նամակում կարդում ենք. «Ամենից առաջ շնորհավորում եմ ձեր նշանդրեքը և հղում եմ ձեզ լավագույն ցանկություններս այդ առթիվ, թեև չեմ հավատում, որ իրոք նշանվել եք: Բայց ասում են, խելացի մարդիկ ոչ մի բանի վրա չպիտի զարմանան այս պաղ լուսնի ներքո, որովհետև ոչ մի անհնարին բան չկա այս աշխարհում» : Անձնական կյանքի իր երջանկությունը բանաստեղծը փորձում էր գտնել արվեստում. ...Եվ կյանքս բոլոր մի երկարատև Նինջ թվաց հոգուս, մի քաղցր երազ, Նրբին մի համբույր հեռու օրերում, Մանկական մի երգ, որ չունի անուն... Սուսաննայի հետ բաժանումից հետո Տերյանն ամուսնացավ Անահիտ Շահիջանյանի հետ, ով բանաստեղծի կողքին եղավ նրա ծանր հիվանդության ժամանակ և ժառանգ պարգևեց: Սակայն Տերյանը երբեք չմոռացավ Անթառամին: Մահվան մահճում նրա շուրթերը շարունակ Անթառամի անունն էին տալիս, թեպետ կողքին էր Անահիտը:

Գրողի նամակների ուշադիր քննությունը բացահայտում է պոետի խառնվածքը, աշխարհայացքը, հուզաշխարհը և վեր հանում նրա հոգու տագնապները: Վահան Տերյանի՝ խորապես սիրային հագեցվածություն ունեցող նամակները կենսական ակունքներ ունեն: Մեկը մյուսի հետևից ստեղծված նրբանուրբ երգերը դարման դարձան սիրելիին չհասած բանաստեղծի կսկծացող սրտին՝ ստեղծելով երազային պատրանք:

Վահան Տերյանը այն գրողներից է, որոնք գրական մեծարժեք ժառանգություն թողնելով հանդերձ, շատ քիչ բան են գրել իրենց անձնական կյանքի մասին:Բարեբախտաբար ինքնակենսագրականի բացը զգալի չափով լրացնում են բանաստեղծի գրած նամակները, որոնք նա ուղղել է իր մերձավորներին մոտ երկու տասնյակ տարիների ընթացքում: Վ. Տերյանը նամակներ քանակով ամենից շատը գրել է իր ամենամոտ ու սիրելի ընկեր Ցոլակ Խանզադյանին:Վերջինս, ինչպես հայտնի է, նրա դպրոցական դասընկերն է եղել Լազարյան ճեմարանում սովորելու տարիներին: Այս մտերմությունը հարատևել է նաև հետագայում,երբ երկու ընկերները համալսարանական կրթություն էին ձեռք բերում և կյանքի ասպարեզ դուրս գալիս:Վ. Տերյանը նամակներ ունի Ց.Խանզադյանի անունով սկսած 1907 թվականից:Այդ բեղմնավոր նամակագրությունը շարունակվում է մինչև 1918թ. և ընդհատվում՝ հասնելով 80-ի:

Ցոլակ Խանզադյանին 1916, հուլիս II կես -օգոստոս, Պետրոգրադ

Սիրելիդ Ցել։ … Թշվառ ու դժբախտ ժողովուրդ ենք մենք և այդ չգիտենք ու չենք ուզում ընդունել, եթե գիտենք կամ եթե ընդունում ենք, ցավող սրտով չենք ընդունում, այլ տանջանքից փախչելու և մեր ապիկարությունն արդարացնելու համար ենք ընդունում։ Մեռած և արդեն ծիծաղելի կուռքերի համառ ճանաչմամբ այդպիսին չե՞ն, ասիր, արդյոք, այդ Փափազյանները, Ահարոնյանները, Նար-Դոսները, ուզում ենք մեզ ազատել գալիքի ստեղծման նեղությունից։ Ահա թե ինչու մեզանում այդպես վախենում են քննադատությունից։

Ահա թե ինչու հարձակվեցին քեզ վրա, երբ դու համարձակվեցիր ասել ամենատարրական ճշմարտությունը ոչ մի աղոթաբանություն չառաջացնող այդպիսի կուռքերից մեկի (Ահարոնյանի) մասին։ Անցյալում մարդկանց վաստակի և դերի ճանաչումը չպետք է արգելակ դառնա գալիքի համար, և ի սեր այդ վաստակի ու դերի ճանաչման չպետք է կանգ առնել և տեղում դոփդոփել։ Ընդունելով վաստակն ու դերը, պետք է առավել ևս խիստ քննադատել։ Ես երբեք չեմ վախենում խիստ քննադատելուց (ինձ և ուրիշներին), բայց շատ եմ վախենում քչով բավարարվող ճանաչումից, ճանաչում, որը բավարար հիմքեր չունի։ Ահա թե ինչու ես միշտ գնահատում եմ մեր Պաոլոյին նրա սուբյեկտիվ կրիտիցիզմով հանդերձ։

Հենց դրա համար էլ նրան ատում են բոլոր քարացածները։ Ես շատ լավ գիտեմ նրա սարսափելի բնավորությունը, երբեմն նրա անտանելի արարքները, բայց նա Սիմ. Հակոբյանների և նման ուրիշների թայը չէ, որոնք հայրենասիրական սվսվոցով գովերգում են ամեն զիբիլ միմիայն նրա համար, որ դա «մերն» է, հայկական։ Մենք պետք է վախենանք այդ քարացած սեթևեթումից և ոչ թե մեր սխալներից ու խստությունից- չէ՞ որ մենք գիտենք, որ սիրում ենք մեր ժողովուրդը և նրա լեզուն, և նրա ցավը մեզ օտար չէ, բայց վա՛յ մեզ, եթե սկսենք ստրկամտորեն ծափահարել հին վետերաններին սոսկ նրա համար, որ նրանք «վաստակավոր» «վետերաններ» են։ Այստեղ ես կասեի հակառակը այն բանի, ինչ, կարծեմ, ասել է Ալեքսանդր Երկրորդը հանցագործների մասին. «Ավելի լավ է անիրավացի կերպով վիրավորվեն և դատապարտվեն հարյուրավոր վետերաններ, միայն թե չկործանենք թեկուզ մի ծիլ, որը զարդարելու է գալիքի այգին»։ Բայց ես տարվեցի և շատ շատախոսեցի։ Վերջակետ եմ դնում…

Ցոլակ Խանզադյանին գրված նամակում Տերյանը ասում էր, որ պետք է առողջ քննդատել։ Այսինքն՝ մարդու սխալները իրեն ցույց տալ, որպեսզի նա ապագայում դա այլևս չանի։ Սակայն պետք չէ այս հնարավորությունը չարաշահել և չարություն անելու համար մյուսներին քննադատել։ Նա ասում է, որ պետք չէ անցյալի վաստակը անընդհատ թմբկահարել, այլ պետք է ապագայի մասին մտածել։

Մեր մեծ գրողներից Հովհ. Թումանյանը և Ավ. Իսահակյանը անշուշտ եզակի դեմքեր են, որոնց հետ այնքան սրտալի մտերմություն է ունեցել Վ. Տերյանը։ Գեղեցիկ

ու բովանդակալից այս բարեկամությունը պայմանավորված է եղել մի շարք արժեքավոր պարագաներով և, հետզհետե խորացել է ու հաստատվել: Այն հարատևել է մինչև Տերյանի անժամանակ մահը:

Հրապարակի վրա չկան և այդ մասին մեզ հայտնի չէ, արդյոք Հովհ. Թումանյանը գրե՞լ է նամակներ Վ. Տերյանին թե ոչ: Հավանական է թե՛ մեկը, թե՛ մյուսը: Մինչդեռ որոշակի փաստ է, որ այլ և այլ առիթներով վերջինս փութացել է իր նվիրական զգացմունքները ցուցաբերել Հ. Թումանյանի նկատմամբ, նրա օգնությանը ապավինել իր կյանքի դժվար րոպեներին:

Ինչ Ավ. Իսահակյանին է վերաբերվում, ապա այդ բարեկամությունը ունեցել է նաև ուրիշ փուլեր: Մի օր, երբ հայ գրական հասարակության սեփականություն կդառնան Ավ. Իսահակյանի նամակները Վ. Տերյանին, միգուցե և լույս կընկնեն նոր գրություններ, նշանավոր քնարերգուի կողմից ուղղված անմահ Վարպետին:

Երևի թե հնարավոր լինի վերստեղծել մեր մշակույթի այս երկու խոշորագույն գործիչների փոխադարձ գնահատության մոտավոր պատկերը:

Ավետիք Իսահակյանին 1908, 23 ապրիլի, Թբիլիսի

Սիրելի Ավետիք այսօր ստացա նամակդ, որ Մոսկվայից շրջան գործելով հասել էր ինձ վերջապես: Ինձ համար շատ գնահատելի է քո գովասանքը իմ ոտանավորների վերաբերմամբ: Մտադիր էի հրատարակելու մի փոքրիկ գրքույկ, սակայն կարծեմ չպիտի հաջողվի «ինձնից անկախ պատճառներով»: Թեև մյուս կողմից ես այնքան էլ չեմ շտապում առանձին գրքով լույս ընծայելու այդ տողերը: Ես հույս ունեի քեզ այստեղ գտնելու: Այժմ սպասում եմ, հուսով եմ, որ կտեսնվենք, թեև կարող է պատահել, որ ես գնամ գյուղ, որովհետև եթե մնայի, պիտի մնայի գրքի հրատարակության համար, իսկ այժմ միտք չունի մնալս, որովհետև առողջությունս բոլորովին քայքայված է և կարևոր է լուրջ բժշկվել և հանգիստ կյանք վարել: Քո Մոսկվա գնալու միտքը հիանալի է, և ես կարծում եմ, որ այնտեղ կարելի կլինի դասեր գտնել, թեև դու լավ ապրուստի սովոր լինելով շատ փողի կարիք կունենաս, այնպես որ քեզ երևի հարկավոր կլինի ամիսը առնվազն 75-80 ռուբլի, որ դասերով դժվար է հայթայթել: Մի խոսքով կգաս այստեղ, կխոսենք ավելի երկար և ծրագրեր կկազմենք, ինձ թվում է, որ դա կարելի բան է: Այստեղ ծանոթացա օրիորդ Քոչարյանին, որը քեզ շատ է սիրում և միշտ քո մասին է խոսում: Քո մասին շատ բաներ եմ լսել, բայց այդ ամենը գրել չարժե, կգաս կզրուցենք: Մեր Ս-Դ.-ական «Գործում» ուզում էի քո մասին գրել՝ փակել են ամենալիրբ կերպով, տեսնենք. ասում են «Մամուլ» պետք է լույս տեսնի՝ ես այնտեղ կգամ, որովհետև քո քննադատներից գոհ չեմ: Խնդրեմ դա չընդունես իբրև ինքնահավանություն, այլ միայն անհամաձայնության մտքով եմ ասում ես այդ: Տեսնենք: Դու հարցնում ես Մագուրի մասին, քեզ եմ նվիրում

նրան՝վայելիր: Ես արդեն նրա հետ կապերս կտրել եմ: Ասում են այստեղ դու սանինիզմ ես քարոզում... Մի՞թե չգիտես, որ դա միայն Ռուսիայի օրինված դաշտերում կարող է սնվել և պտուղներ տալ: Առայժմ այսքանը: Կտեսնվենք կխոսենք:

Քո Վահան

Տերյանը շնորհակալություն էր հայտնում Իսահակյանին իր գովասանքի համար: Պատմում էր, որ ծանոթացել է օրիորդ Քոչարյանի հետ, ով շատ էր սիրում Իսահակյանին: Իսահակյանը գնալու էր Մոսկվա և Տերյանը նրան խորհուրդներ էր տալիս, ինչպես լավ ապրել: Նամակի վերջում նրան բարևում էին Տերյանի ընկերները, ովքեր շատ էին ցանկանում տեսնել նրան:

Հովհաննես Թումանյանին (հեռագիր) 1913, նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 1, Պետերբուրգ Թիֆլիս, Վոզնեսենսկայա 18, Հովհաննես Թումանյանին

Հիվանդ եմ, նյութապես ծայրահեղ դժվարին վիճակում, խնդրում եմ, եթե հնարավոր է, ճարեցեք փոխարինաբար 150 ռուբլի:

Հուսով եմ ինձ կպաշտպանեք ստորացումներից, ավելորդ խոսակցություններից: Ընդունում եմ նյութական բնույթի ամեն պայման: Սպասում եմ շուտափույթ հեռագրական պատասխանի:

Վ.Տերյան

Հովհաննես Թումանյանին (հեռագիր)

Զգացված եմ Ձեր ուշադրությունից, ջերմությունից, մեծապես շնորհակալ եմ, կգրեմ առաջին հնարավորության դեպքում: Վ. Տերյան Հովհաննես Թումանյանին 1913, 11 դեկտեմբերի, Պետերբուրգ Սիրելի և հարգելի պարոն Թումանյան Ամենից առաջ խնդրում եմ ներողամիտ լինեք դեպի ինձ, որովհետև ինքս շատ լավ զգում եմ, որ արածս բանի նման չէր, բայց արտակարգ պայմաններն ստիպեցին ինձ դիմելու մի այդպիսի արտակարգ միջոցի և այնքան անսպասելի ու անտեղի կերպով Ձեզ անհագստացնելու: Որքան մեծ էր իմ շփոթմունքը, երբ Ձեր ուղարկած փողն ստանալուց մի քանի օր անց ստացվեց «Հորիզոնը», ուր ես ամոթով կարդացի Ձեր հայտնած կարծիքը իմ գրվածների մասին: Այդ զարմանալի զուգադիպությունը ինձ ուղղակի շվարեցրեց: Թույլ տվեք այդպիսի պարագաներում խուսափելու իմ զգացմունքներն արտահայտելուց, թեպետ գիտեմ, որ Ձեր պայծառ ու ազնիվ լավատեսությունը թույլ չի տա Ձեզ իմ մշտական և խոր հարգանքի ու սիրո 30 զզգացումները կապելու այդ վերջին դեպքերի հետ: Ինձ խորապես հուզում է Ձեր բարի և բարեկամական վերաբերմունքը, և Ձեր սիրելի հովանավորությունը «ի սկզբանե» ես ընդունել եմ իբրև անգնահատելի և բարձր պատիվ: Ընդունեցեք իմ ամենաջերմ շնորհակալությունը և թույլ տվեք այս անգամ չերկարացնեմ նամակս,

որովհետև, կրկնում եմ, ներկա պարագաներում, չնայած վերը հիշածս վերապահության Ձեր մասին, իմ նրբանկատ դրությունը թույլ չի տալիս բուռն զգացմունքներս արտահայտելու: Կուզեի խնդրել, որ հայտնեք ինձ, թե ինչ պայմաններով ու ժամանակով է ուղարկված այդ փողը, որպեսզի օր առաջ մտածեմ ու անելիքս իմանամ: Ներողություն եմ խնդրում և այս անհանգստության համար, որ պատճառում եմ կրկին Ձեզ, բայց, հուսով եմ, մի երկտողով չեք զլանա ինձ տեղեկացնելու այդ մասին: Իմ ջերմ ողջույնների հետ ընդունեցեք անկեղծ ու խորին հարգանքս ու շնորհակալությունս:

Ձեր Վահան Տերյան

Սկսած իր կյանքի քսաներկուերորդ տարուց Տերյանը բազմաթիվ և բազմապիսի առիթներով գրել է իր այդ նամակները և թեպետ շատ անգամներ թախանձելիս է եղել,որ ստացողը երբեք ոչ ոքի հաղորդակից չանի այն ամենին, ինչ ինքը իր սրտի ու հոգու բյուրեղային հստակությամբ շարադրել է դրանց էջերում, այսօր այդ գրությունները զարդարում են նրա նամակային արձակը:

Պետք է ասել, որ մասնավորապես այդ նամակները,զգեստավորված հիսնամյա վաղեմության քողով, այլևս չեն կարող նկատվել որպես <<մասնավոր անձանց չափից դուրս մոտ վերաբերվող>> փաստաթղթեր: Դառնալով հանրության սեփականություն, դրանք նոր որակ են ստանում և դրանով իսկ մեծագույն արժեք ներկայացնում առհասարակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վահան Տերյանն այն բանաստեղծներից է, ում հետքերով կարելի է միշտ գնալ, փնտրել ու փորձել գտնել անպատասխան մնացած հարցերի պատասխաններ, կարդալ նույն ստեղծագործությունները՝ նորովի ընկալելով և նոր բացահայտումներ անելով: Այս անգամ հերթը նրա նամակներինն էր: Գրվածքներ, որոնցում դու տեսնում ես նրա ներաշխարհը, հույզերն ու ապրումները: Նամակները կարծես նրա, թե՛ գործնական և թե՛ անձնական կյանքի անբաժանելի մասն է կազմել:

Նրանց գրված նամակներից յուրաքանչյուրն էլ կարելի է յուրովի մեկնաբանաել, բայց մի բան հստակ է բոլորում էլ՝ կարոտ, տխրություն ու թախիծ: Հեռավորություն էր, որ հեղինակին բաժանում էր սիրելիներից, ովքեր նույնպես տանջվում ու սպասում էին հետադարձ պատասխանի: Ինչպես Տերյանի բանաստեղծությունները՝ նամակները նույնպես շատ տարբերվող են: Նա այնքան գեղեցիկ ու գեղարվեստորեն է նկարագրում յուրաքանչյուր մանրուք, անում համեմատություններ, որոնք առանձնահատուկ են դարձնում նամակաները:

Բացի իրեն բնորոշ “աշնանային” արտահայտություններից՝ Տերյանն իր նամակներին է կցել ստեղծագործություններ նվիրված հասցեատիրոջը, ինչպես օրինակ Մարթա Միսկարյանի և Նվարդ Թումանյանի դեպքում է:

Նվարդ Թումանյանին գրված նամակում Տերյանը պատկերավոր նկարագրում է իր կարոտը, հայտնում ցանկությունը՝ սարեր բարձրանալու , համբուրելու նրան: Հիշարժան են Նվարդին նվիրած տրիոլետները, որոնք հեղինակը “թերագնահատում” է : Թերևս շատ հատկանշական էր նամակի վերջում գրված ՔՈ Վ.Տ.-ը, որը կարծես ամբողջացնում էր բուն սիրային գրվածքը:

Այսպիսով կարողացանք տեսնել Վ. Տերյանին նաև այս կողմից՝ առանց հանգավորված կամ էլ չափածո տողերի, որոնք իրենց մեջ մի օվկիանոս կարոտ, սեր ու տխրություն են պարունակում:

Վահան Տերյանի գրչի տակից դուրս եկած նամակները իրենց բովանդակությամբ, շարադրանքի կարողություններով անպայման խոշոր արժեք են ներկայացնում մեր գրականության ու քննադատության, անգամ հայ նորագույն պատմության համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կամսար Գրիգորյան, Վահան Տերյան, Երևան 1983

2. Հրանտ Թամրազյան, Վահան Տերյան, Երևան 1985

3. Սաքո Սուքիասյան, Էջեր Վահան Տերյանի կյանքից, Երևան 1959

4. Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հատոր 4, Երևան 1979

5. Վահան Տերյան, Երկեր, Երևան 1989

6. Վահան Տերյան, Նամակներ, Երևան 1972

7. Վաչե Պարտիզունի, Տերյան, Երևան 1968

8. Վաչե Պարտիզունի, Տերյանի կենսապատումը, Երևան 1984